


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԱՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳԻՐ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ի Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80
» » վեցամսեայ » 50
Oscar երկիրներ տարեկան Գրանք 25
» » վեցամսեայ » 14
Թիւր ստաւի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

Տանկի համաճարակն իր անսխալ աղբիւրներէն
ըրած ըլլալով նաեւ Փարոսի խմբագրատան ու տպա-
րանին, հակառակ մեր բոլոր տրամադրութեան՝
անկարելի եղաւ չորեքշաբթի օրը թերթ հրատա-
րակել, որուն համար ընթերցողներու ներողութիւնը
կը խնդրենք :

ՈՒՐ Է ԱՅՆ ԽԵԼԵՐ

Վիեննայէն «ստոյգ աղբիւրէ», Լոնտոնի
Տեյլի Թէյէկրաւին զարնուած հեռագիրը որ
Հայաստանի Բարենորոգումներու խնդրին վե-
րակենդանութիւնը կը ծանուցանէր, կը ճառա-
ուած հասաւ մեզի: Այդ հեռագիրը ունի երկ-
րորդ մաս մը որ ամբողջացնելով առաջին մաս-
ը, միեւնոյն ժամանակ կը ջնջէ, գոնէ միզի
համար, անոր ուժը: «Հայաստանի խոստաց-
»ուած բարենորոգումներուն հուշակումը պա-
»հանջելով, Պետութիւնները պիտի կարենան
«ճնշում բանեցնել Սուլթանին վրայ՝ կրէտական
«խնդրին լուծումը իրենց ուղածին պէս դիւ-
«րացնելու»: Պահպանողական լուրջ թերթին այս
հեռագիրը մտացածին լուրերու զամբիւղը նե-
տելու որ եւ է լուրջ պատճառ չունիք. ո՛չ ա-
պաքէն քսան տարուան վշտայից անցեալ մը
կրնայ ապագային համար ալ երախտաւորել
այդ լուրին հաւանականութեանը: Եւ արդո-
րեւ քսան տարի է «Հայկական խնդիրը» ծա-
մակէսի սուրին նման առկա կը մնայ Թուր-
քիոյ գլխուն վրայ: Կը հանդիպի՞ Սնդիս որ
եւ է դժուարութեան՝ եղիպտական գործերու
համար. «Ի՞նչ պիտի ընենք սա հայկական
խնդիրը» կը հարցնէ Թուրքիոյ. և պատաս-
խանը կըլլայ «Օհ, Նեղոսի վրայ այդ ձեր ի-
րաւունքն է»: Ու Անգլիա, որուն նախարարա-
պետը Կլատտիլըն ըլլայ թէ Սողոմոնի, կը մու-
նայ զարմանք յայտնելու թէ խնդիրը Եփրա-
տին շուրջը կը դառնայ և ոչ թէ Նեղոսի: Կը
ծնի՞ կնճռատութիւն մը Պալքան. և ահա՛ Պ.
Նէլիսօֆ խոտուադէմ կը վազէ Դուռը և կը
պոռայ թէ «մեր սահմանագլխին վրայ չենք
կրնար հանդուրժել Հայաստանի տառապանք-
ներուն», և ահա՛ Պալքանեան բոլոր դժուա-
րութիւնները կը հարթուին դիւթական գաւա-
զանով մը. ո՛րը Արարատ, ո՛րը Պալքան: Ո՛չ
Անգլիոյ ո՛չ Ռուսիոյ մտքէն կանցնի հարցնել
Թուրքիոյ թէ «ես տանձ կըսեմ» դուն գա՛նձ
կը հասկնաս: Օհ, ան աղէկ հասկցած է.
Թուրքիա ո՛չ միայն կաշառք ուտելու արհես-
տը պանչելապէս գիտէ, այլ եւ գերազանցօրէն

ճարտար է կաշառելու: Մենք յաւիտենական
«տանձ»ն ենք, միշտ «գանձ»ի վերածուած
մեծ պետութիւններուն համար:

* * *

Ինչպէս մինչեւ հիմա եղած պահանջում
ներու, նմանապէս և ասկէ ետքն ալ կրէտա-
կան թէ ուրիշ գործի յաջողութեան համար
մեծ պետութիւններուն կողմէ հայկական
խնդրին դիմումը չատ յստակօրէն կը պարզէ
ճշմարտութիւն մը: Հայաստանի բարեկարգու-
թիւններու խնդիրը անլոյծ կը մնայ ո՛չ թէ
պետութիւններուն անկարողութեանը պատ-
ճառաւ, այլ անոնց չահագիտական նկատում
ներով: Մեծ պետութիւններուն աչքին՝ հայ-
կական խնդիրը իրենց թէ՛ հաւաքական և թէ՛
մասնաւոր շահերուն համար զօրեղ գէնք մըն է
թուրքին գէմ: Եւ արդարեւ, ո՛չ պետութիւն-
ները հայկական խնդրին սպառնալիքը իբր
սուր պիտի չողացնէին Թուրքիոյ աչքերուն,
ո՛չ ալ Թուրքիա երբեք պիտի վախնար այդ
սուրէն, եթէ երկու կողմէն ալ հայկական բա-
րենորոգումներու անկարելիութեանը կասկած-
ներ ունեցած ըլլային: Պետութիւնները իրենց
ուժը կը ճանչնան. Սուլթանն ալ աղէկ գիտէ
թէ Պետութիւնները եթէ ուզելու ըլլան՝ մէկ
ժամուան մէջ կը լուծեն այդ խնդիրը, ուստի
կը զգուշանայ վճռական միջամտութեան մը
առիթը հայթայթել: Նարդը առիթ մը չէ,
վասն զի ոչ մէկ պետութեան շահերուն կը
փնտէ. ընդհակառակը, ոմանց ալ կը նպաս-
տաւորէ: Ե՛րբ, ո՛ր արդէն շահերը անմե-
ղին, թշուառին արիւնոյն ու արցունքով չեն
ողորգուած:

* * *

Ինչո՞ւ Թուրքիա չուզեր ազատիլ այդ
սպառնալիքին լուծէն: Եթէ Դուռը մինչեւ
հիմայ հայերը բաւականաչափ գոհացուցած
ըլլար, ո՛չ միայն Թուրքիան ինքզինքը ուժով
պիտի զգար, այլ և «կախուած սուրն» ալ
մէկդի կը նետուէր. այսքան տարուան մէջ
Թուրքերը ինչե՛ր վրայ չի տուին սպաննելու
համար հայկական խնդիրը որ սակայն կը մնայ
միշտ կենդանի: Ինչո՞ւ մեզի չեն տար այդ
գոհացումը որ բարիք մըն ալ է իրենց համար
Պատասխանը,
—Ո՛ր է այդ խնդիրը:

—

ՔՐՕՆԻԿ

Այս պահուստ առանց ցանկի վրայ բան մը ըսե-
լու քրօնիկ մը գրելը՝ օրէնքէն մը յորինելու պիտի
նմանէր որուն մէջ սէրը մոռցուած ըլլար: Խօսինք ու-
րեմն տանկայի վրայ, քանի որ tout est à la dengue:

Տասն օրուան տանկայեալ վիճակի մէջ շատ
մտածեցի այս չարածի հիւանդութեան վրայ որ
ամենուս տաղտուկ կը պատճառէ և բժիշկներուն
վարդագոյն երանութիւն մը:

Ա՛խ, հին բարի ժամանակները: Մեր հայրերը,
երբ հարբուս կ'ըլլային, —ամեն քթաւոր կենդա-
նիներու բաժինն է այս— երկու անգամ կը փռնգ-
տային, չորս անգամ կը հաւաքային և թող կուտային
որ իրենց դէմքին ամենէն ցից մասը Վալասի ուղ-
բիւրի մը պէս իր արցունքները թափէր կապոյ տ
կամ կարմիր թաշկինակի մը մէջ, թաշկինակ մը որ այն
ատեն մեծ էր հիմակուան պղտիկ պարտէզի մը չափ:

Գաւաթ մը տաք որ եւ է ինչ մը, զոյգ մը բուրդէ
գուլպայ և ամեն ինչ կ'անհետանար:

Բժիշկները իրաւունք չունէին հարբուսի մը
մէջ իրենց քիթը մոցնելու:

Որքա՞ն փոխուած են ժամանակները, Աստ-
ուած իմ:

Բառսուն աստիճան ջերմ, ոսկրագոտերու ջախ-
ջախում մը, հազ, վլի յաւ, կիտամեռ վիճակ և ահա՛
անկողին կիչնա քայքայուած վայրաշարժի մը պէս:
Դարավերջի հարբուսն է այս:

Բժիշկը ճառագայթով դէմքով մը լսողերակդ
կը քննէ. կը թթուեցնէ երեսը, ալալմինի, կասթ-
րիտի և չեմ գիտեր ինչի անուններ կուտայ. եր-
կայն դեղագիր մը բարձիդ վրայ կը թողու և կը
յանձնարարէ զգոյշ ըլլալ որովհետեւ տանկը՝ երբ
բժիշկի ձեռք անցնի կրնայ մահացու ըլլալ:

—Իրիկունը նորէն կանցնիմ, կըսէ, և մատներուն
վրայ կոխելով սնարէդ կը հեռանայ:

La belle affaire !

Տասն օր կը պառկիս և թերթ չես հաներ: Լախ-
տի հարուածի մը պէս գլխուդ կիչնէ տանկը և եթէ
կրնաս՝ օճիքդ ազատէ Հիբոկրատի ձեռքէն:

Բարեբաղդաբար բնութիւնը՝ դեռ մեզի բորեւ-
կամ կը մնայ: Աստու մը կզգաս որ ոսկորներուդ,
գլխիդ և ինքզինքիդ տէրն ես: Անկողնէդ կը ցատ-
քես դուրս, թէեւ քիչ մը նիհար, քիչ մը տկար,
բայց վերջապէս կզգաս թէ՛ եթէ բժշկութիւնը յա-
ռաջ գացած չըլլար, հարբուսը հարբուս պիտի մնար
գաւաթ մը օխլամուրով բուժելի:

Բայց բան մը աւելի կը սորվիս այն է թէ par
le temps qui court ապրելու չափ դժուար է այսօր
հիւանդանալն ալ:

Հիմայ հասկցա՞ք թէ ինչո՞ւ չորեքշաբթի Փա-
րոսը չեղաւ:

Յանցանքը դարավերջինն է:

* * *

Շոգիի և երկտրականութեան այս տենդոտ
դարավերջին մէջ ուր ամեն բան դէպի յառաջ ըն-
թանալու նախասահմանուած է, միևնա՛կ հայկական և
կրէտական խնդիրներն են որ կրնայի փութկոտու-
թիւն մը ցոյց կուտան և կը մնան ուր որ են:

Դիւանագիտութեան այս կրկին ժամանցները

—Հայկական և կրէտական գործերը— իրենց յաւիտենական հոգեւոր փրկանքին մէջ անանկ train-trainի մը կը հետեւին որ մարդու ջիւղերը ոտք կը հանեն . . . հարստահարուած ժողովրդեան մը պէս :

Նախարարները և գեապանները կը փոխուին , զլաւնապետութիւնը գետնախուծի պէս ամեն վայր կ'ան դոյն կը փոխեն , վեհապետները իրարու այցելութիւն կուտան , ամառը ձմեռ կըլլայ , րայց , ամառը , ոչ Հայաստան կը բարեկարգուի և ոչ կրեւտէ կառավարիչ մը կրնայ ունենալ :

Հայաստանի բարեկարգմանը խնդիրը տասներեւնէրորդ դարուն ժառանգութիւնը պիտի ըլլայ՝ քսաներորդին թուումը :

Բայց ասոր վերջը :

Ահա՛ խնդիր մը որ շատ կ'զբաղեցնէ եթէ ոչ գլխի՝ գոնէ սրտի տէր մարդիկը , և ատոր լուծում մը գտնելը մարդասիրական պարտականութիւն մըն է զոր խելու եւնք ճաշատ քիթովմարներու ձեռքէն :

Քրօնիկագիր մը անպատճառ զրկուած ըլլալու չէ քաղաքագիտական շնորհներէ . հետեւորար , ան տեղի չի պիտի ըլլար մեր կողմէ , եթէ առաջարկէինք Հօլմընի , օրինակի համար , ֆրանսիոյ մը շինել որ կառավարել գիտնար կըլլի մը որուն չորսը ծովակալներ կը սըլքտան տարիէ մը ի վեր և որուն քիչ մնաց կառավարիչ պիտի ըլլար լաւ վարել գիտցող սպայ մը en rupture de goulons՝ Բարենորոգումներուն գալով , դեռ քիչ մը եւս սպասելու ենք : Այս սպասելու ենք մինչեւ այն օրը ուր էրիկ մարդիկ յոգնած երկիրը կառավարելէ , այդ պաշտօնը գոն յանձնեն կիններու որոնք այս պահուս կոկորդիլին կը պատուեն հասկններու համար թէ այլեւս ժամանակը եկած է իրենց համար չընդգրկուող չընդունակէն դուրս ցատկելով աւելի առնական բաներով զբաղելու :

Թիւիներ , փաստաբաններ , նոյն իսկ գիւնաւ գէտներ չեն պակսիր գեղեցիկ սեռին մէջ և երբ կարգը գայ անոնց զեղ կառավարելու , թերեւս այն ատեն Հայաստան ալ բարենորոգումներու երես տեսնէ :

* *

Վերջացնելու համար , Հօլմընէն բառ մը :

—Իմ ֆանթօզներս —կըսէր երէկ գիշեր , — շատ աւելի մարդիկ չկը վարուին հետաքրքիր օրէնքներու տակ . . . ամառը գլխուն ստակ չեն պահանջեր :

Յ. Ա.

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Սքանաւարժին Կ. Պոլսոյ թղթակիցը հետեւեալ երկու տեղեկութիւնները կը հաղորդէ .

1. Անցեալ չաբաթ օրուան նախարարաց խորհուրդին՝ Սուլթանը յայտարարեւ է թէ մտադիր է ելմտական նոր յանձնաժողով մը կազմել հիմնովին կազմակերպելու համար երկրին ելեւմտաբեր :

2. Այն դիւրութիւնը որով եւրոպական մամուլը մինչեւ ցարդ տեղեկութիւններ ստացած է ի մասին կարգ մը կարեւոր անօրինութեանց , զխաւորաբար զօրաբանակաց չարժումներուն , մինչեւ մէկ աստիճան յուզում պատճառեւ է պալատը : Հետեւաբար իրատե մը ելեր է արգիլելով բոլոր պետական պաշտօնատարներուն՝ քիւլաները , սրճարանները յաճախել և մինչեւ իսկ Բերայի փողոցները շրջիլ :

—Շքոտարայէն կը հաղորդեն թէ շատ մը ալաւանիացի ցեղապետներ Տիգրանակերտ արքունիք են :

—Թանի Կ. Պոլսոյ թղթակիցը կը գրէ թէ Դրան և Պանք Օթոմանի միջեւ բանակցութիւններ կը կատարուին մէկ միլիոն օսմանի կանխավճարի մը համար որ երաշխաւորուած ըլլայ պատերազմական տուգանքով : Այդ գումար պիտի յատկացուի պաշտօնէից

ամաթոշակներուն , երկաթուղոյ ընկերութեանց պահանջին՝ պատերազմի ատեն կատարած փոխադրութիւններուն համար , և թեւադիոյ բանակի մէկ մասին ծախուց վճարման :

—Պէրլինի օսմ. դեսպան Ղալիպ պէյ Պոլիս գացեր է , Վիլհէլմ կայսեր յառաջիկայ գարնան երուսաղէմ ու Պոլիս այցելութեան առթիւ կատարելի նախապատրաստութեանց ու արարողութեանց ծրագրին վրայ բանակցելու :

—Պրանկօրքէր Զայրունկի մէկ նորագոյն տեղեկութեան նայելով , որ ստուգուած թեան կը կարօտի սակայն , օսմ. պատուիրակները յայտարարեւ են Պ. Մալլաբօրտաթոյի թէ հաշտութեան պայմանագրի այն յօդուածը որ կը տրամադրէ թէ թուրքիս հաստատուած հելլէն հպատակները ընդունելուն (օսմ. հպատակ քրիստոնեաներ) հաւասար պիտի նկատուին այսուհետեւ , եթէ առանց ձգձգումի չընդունուի իր կողմէ , Դուռը մեծ Տէրութեանց իրաւարարութեան պիտի յանձնէ խնդիրը :

—Պոլսոյ թուրք թերթերը կը շարունակեն պաշտօնական յայտարարութիւններով հերքել անգլիացի թղթակիցներու հաղորդած հեռագրական կարգ մը տեղեկութիւնները , որոնք արձագանգ գտած են նաեւ ուրիշ թերթերու մէջ : Այս անգամ մասնաւորապէս կը հերքեն Սքանաւարժի հօկոմ. 18ի թիւին մէջ երեւցած այն լուր թէ հրաման ելած ըլլայ 50 վաշտ զօրք շարժուն վիճակի մէջ գնել յԱնատոլոյ , 20 վաշտ կանոնաւոր զօրք զըրկիւ թեալիւ , պահեստի չորս զօրաբանակ կազմել Երզնկայ և Համիտիէ հեծեալազուրկ պատերազմական վիճակի մէջ գնել : Ասոնք բոլորն ալ անհիմն ու սխալ են , կըսէ հերքմագիրը :

Դարձեալ կը հերքեն այն լուրեր թէ միւսիոնարները պիտի հրաւիրուին հեռանալ գաւառներէն , թէ տարափոխիկ հիւանդութիւններ կը ճարակին ու սովի երկիւղ կայ հայաբնակ գաւառներու մէջ , թէ երկրագործութիւնը բնաջինջ կըլլայ եայն :

Նոյնպէս բողբոջին կը հերքուի Թակէպըրի այն լուր թէ Սըվադի ու Ճանիկի մէջ չիթութիւններ ծագած ըլլալով , այդ կողմեր զօրք զրկուած են :

—Աթէնքէ կը հեռագրեն նայե Թրայէ Բրէնէին թէ հելլէն չընանակներու մէջ բուռն մտահոգութիւն կը տիրէ սա պատճառաւ որ , հակառակ հաշտութեան նախաշաւի պայմանագրի տրամադրութեանց ի մասին առեւտրական յարաբերութեանց ու ազատ նաւարկութեան վերսկսման , օսմ. իշխանութիւնները թոյլ չեն տար եղեր յունական նաւերուն՝ իրենց ապրանքներն օսմ. նաւահանգիստներն հանել :

—Պոլսոյ հայ թերթի մը մէջ կը կարդանք . «Վառնայէ , Ալեքսանդրիայէ , և ուրիշ տեղերէ Պոլիս եկող ազգայիններէն 120 հոգի արձակուած են Պատրիարքարանի միջնորդութեան շնորհիւ : Մնացած 8-10 հոգիներուն ալ օրինական քննութիւնները կատարուելէ յետոյ , քիչ օրէն պիտի արձակուին : Ասկէ զատ , 80ի չափ գաւառացի ազգայիններ ուր իրենց ծննդավայրը պիտի վերադարձուէին ,

թոյլտուութիւն ստացած են հոս իրենց գործերով զբաղելու » :

ՅՈՅՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԸ

Էթնիքի էթերիան , յունաց յեղափոխական ընկերութիւնը որ վերջին պատերազմի գրգռիչներէն մէկը կը նկատուի և զոր յոյները հիմակ էթնիքի (ազգային) կոչելու տեղ էթնօֆօնիքի (ազգակործան) կոչել սկսեւ են , չուզեր լուծութիւն պահել ու մութին մէջ ծածկուիլ : Ընդհակառակը կը ծանուցանէ թէ կարգ մը պաշտօնագրեր պիտի հրատարակէ որոնք բուռն ապաւորութիւն առաջ պիտի բերեն Աթէնքի մէջ և քաղաքական ճշմարիտ գայթակղութիւն մը պատճառեն՝ եթէ իրենց ընդլին հաստատող ապացոյցներ կցուին : Էթնիքիականները կը յաւակնին հաստատել թէ ոչինչ ըրած կամ ընել որոշած են յանգէտ պաշտօնական օրենստանի . և թէ էթնիքիէն ամբողջ գործողութիւնը կանխաւ ընդունուած և կամ նոյն իսկ ներշնչուած էր Պ. Տէլիեանիսի կառավարութեան կողմէ :

Ամենն այդ չէ : Այն յայտարարութեան մէջ զոր էթնիքի պարագլուխները կը հրատարակեն այս նպատակով՝ իրենց ընկերութեան ստանձնած գործին ուրիշ մէկ կարեւոր կէտը պարզուած է : Կը հաւատեն թէ վերջին պատերազմի սխալ վախճանը չէ կասեցուցած ու չի պիտի կասեցունէ իր գործունէութիւնը : Ընդհակառակն այս պատերազմը դաս մը եղաւ , կ'ըսեն , ցոյց տալով ուղղելի թերութիւններ ու ապագայ սխալումներէ խոյս տալու միջոց : Էթնիքէ էթնիքիան , միշտ իրենց խօսքով , աւելի արիւթաբար պիտի առաջ տան իր նպատակը որ է եղեր «մայր-հայրենիքի կառավարութեան ներքեւ՝ արեւելաբնակ բոլոր յոյներուն միութիւնը» :

ՊԱՔՈՒԻ ՆԱԽԱՆՈՐԵՐ

Պարուէն կը գրեն թէ հոկտեմբերի 5ին Բօմանի նախագործուն մէջ ահապին հրդեհ մը ծագեւ է : Միւսնոյն ատեն չորս նախագործներ բռնկուեւ են փոքրիկ հրապարակի մը վրայ : Այդ չորս աղբիւրները մօտաւորապէս օրական 4,507,900 բող նախ կարտագրէին որ այժմեան գներով կարծէ 33-34 հազար բողի : Բացի այս չորս աղբիւրներէն , Մանթաօֆին 8 վիւկաները այրեւ են ինչպէս նաեւ 17 ուրիշ վիւկաներ՝ տարբեր տուններու պատկանող :

Այրած են նոյնպէս այդ նախահանքերուն մէջ պատրաստ գտնուած 3 միլիոն բողի մօտ բողիւ 225 հազար բողի արծողութեամբ : Հրդեհին պատճառած վնասները մէկ միլիոն բողի կը հաշուի :

Կրակը սկսեւ է Մանթաօֆի նախահանքէն : Այս առաջին անգամը չէ որ այդպիսի աղիտարեր հրդեհներ կը պատահին Պարուի քաղաքի աղբիւրներուն մէջ :

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱՒԱԳԵԱՆ

ԳԱՂԻԷ , ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ . ՄԱՍՏԹԱՅԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յամախորդները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործարաններէն բերուած թաւրդեր , չափաւոր գիներով : Դեղագիրները ամենայն խնամօք և ուշադրութեամբ կը պատրաստուին :

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ : Թաւր հանգալից ջուրեր , անուշահոտութիւններ , Բնաւորական և մանրադրոտական քննութիւններ : Դեղարանն կը յամախեն հայ և օտարազգի ծանօթ բժիշկներ :

Բժշկական արի խորհրդածութիւնը աղբատայ համար :

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Կիպրոսի Ձէման յրագիրը պատկերով քե
Լաոնաֆայի նախահանգիսը ժամանած հեշ-
շեն շոգենաւէ մը երկու սնունկ Մարդիկ
հրացան, փամփուշ եւայլն գրաւուեալ են,
որոնց տէրն հայ մըն է եղեր, այս վերջին
պարագային յենկով՝ մեծ համեմատութիւն-
ներ կուտար գործին ու փնտրում հետեւո-
րիւններ կը հանէր, քե ինչէ՞ն գիտնամք որ
առաջին անգամն է աշպխի քան մը պա-
սակիչը եւայլն: Պոչոյ քուրք քերթերն ալ
արտապաճ էին իրենց պաշտօնակցին գրաւ-
ները, իրենց կողմէն ալ աւելցունելով կարգ
մը յոռետես խորհրդածութիւններ:

Ձի պիտի ուզէիմք մեծ կարեւորութիւն
մը ընծայել այս հրատարակութիւններուն,
եթէ Արեւիկի Միութիւնը, որուն ծայրայեղ
ազատականութիւնը տարակոյս չի վերցունել,
Լաոնաֆային քղաքականութիւն մը հրատա-
րած չլըլար նոյն դէպքը մանրամասնաբար
պատմող եւ Կիպրոսի ազգայնոց ցաւը ու
զայրոյթը արտայայտող՝ այս տեսակ ճախող
ձեռնարկութեան մը դէմ որ ուրիշ արդիւնք
չունեցաւ քայց եթէ կողմին խաղաղութիւն
քարկոտիւնը գրգռել հայտնուի դէմ եւ անգ-
լիական վարչութեան ուշադրութիւնը դար-
ձունել հայտնուի վրայ:

Տեղական իշխանութիւնը զենեքը գրա-
ւելով, նաւապետն ու զենեքը տանող հայեն
100 եւ 50 ոսկի երաշխաւորութեան գու-
մար պահանջել է, որպէս զի որոշեալ օրը
դաստասանի ներկայ գտնուի: Միութիւնին
քղաքակցը իրաւաբէ կը հարցունէ քե՝ «ան-
ճարտարութիւն քե ցուցանողութիւն ընդու-
նինքն այս անախորժ միջադէպը»: Որն ալ
ըլլայ, ցաւալի է ամեն տեսակէտով եւ ու-
րիշ արդիւնք չունեցաւ քայց եթէ Կիպրոսի
նման ազատ երկրի մը մէջ խաղաղիկ ապ-
րող ու հանդարտեմ իրենց գործերովն
զբաղող հայտնուի հանգիսը վրդովել, քո-
ղունք որ ուրիշ տեղերու հայտնու հանար ալ
կրնայ ունենալ իր հակահարուածը:

Նորագոյն յուրերու նայելով, Կղզիին
անգլիական վարչութիւնը, այդ դէպքին պա-
ճառաւարդէն իսկ սկսած է խառնութիւններ
ի գործ դնել եւ քառական քուով հայեր
քանտարկել է, որոնք քարեքաղաքաւ ա-
զատուեալ են ի վերջոյ՝ ազդեցիկ հայտնու
միջամտութեան շնորհիւ որ ապացուցել է
անոնց անմեղութիւնը: Միւս կողմէ, կը լսենք
որ ամեն շարքու Կիպրոսի յրեւելներ կը
խրկուին Կիպրոս:

Ահա՛ սնունկ մը հրացանի փոխադրման
ազգասիրական փորձին փոխարէն՝ տեսնուած
քաղաքական վնասները:

ԱԶԳԱՅԻՆ

Երէկի Քաղաքական Ժողովի նիստին մէջ
կարեւոր որոշումներ տրուած են Եգիպտոսի
գաղթականաց մասին:

Գաղթականաց յատուկ յանձնախումբը
շնորհաւ ըլլալով, այդ պաշտօնը յանձնուած
է Աղքատաց Յանձնաժողովին որ իր անդամ-
ներու թւոյն վրայ երեք հոգի աւելցնելով պի-

տի տանանք գաղթականաց խնամքը:

Վարչութեան որոշմամբ, այլ եւս նոր
գաղթականներ չպիտի ընդունուին եւ արդէն
գտնուածներուն մէջ միայն աշխատելու եւ հա-
ցերին հարելու անկարողները պիտի խնամ-
ուին վեց ամիս եւս:

Յանձնաժողովին պաշտօնը պիտի սկսի
յառաջիկայ գեղեմաբէր 1էն եւ պիտի տեւէ
մինչեւ յունիս 1:

Այդ թուականէն ետք ունէ օգնութիւն
չպիտի ըլլուի գաղթականներուն:

Այս վեցամեայ շրջանին մէջ աղքատաց
յանձնաժողովը հասցիւն աղբիւր մը ստեղ-
ծելու համար կարող աղքատներէ ամսական
նուիրատուութեան եղանակով հանգանակու-
թիւն պիտի ընէ: Տարակոյս չունինք որ ամեն
սրտի տէր հայ պիտի փութայ իր կարողու-
թեան չափով ստատել այդ մարդասիրական
գործին:

Տիգրան փաշա այդ հանգանակութեան
գլուխը կը գտնուի եւ ամսական 10 անգլիա-
կան ոսկոյ գումար մը ստորագրած է արդէն:

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՅ ԼՍԱՐԱՆԸ

Վերջի պահուն Ընթերցասիրաց ընկերու-
թեան Գործադիր Ժողովը կողմէ կը խնդ-
րուի մենէ ծանուցանել թէ այս գիշերուան
նուագահանդէսը ինչ ինչ պատճառներով տե-
ղի չպիտի ունենայ:

ՏԵՂԱԿԱՆ

ՍԻԱՄԻ ԹԱԳԱՌՈՐԸ

Մեր վերջի թիւը հրատարակուելէն ետ-
քը Գահիրէ հասաւ Սիամի թագաւորը՝ Ն. Վ.
Քուլալօնկհօրն Ա.

Բարձր Խափը աղքատական ընդունելու-
թիւն մը ըրաւ իր Վեհափառ հիւրին:

Շաբաթ իրիկուն յատուկ կառավարմով
Քուլալօնկհօրն ժամը 5ին հասաւ ընկերակ-
ցութեամբ բռնա Մուհամմէտ Ալիի որ Խափ-
վին կողմէ Աղեքսանդրիա գացած էր դիմա-
ւորելու համար Նորին Վեհափառութիւնը:

Կայարանին մէջ զինուորական պատիւներ
ընծայուեցան եգիպտական եւ անգլիական
բանակներուն կողմէ: Բարձր Խափը՝ համազ-
գեստաւոր, դիմաւորեց Սիամի թագաւորը որ
կայաի կառքով առաջնորդուեցաւ Ապտինի
պալատը:

Փողոցներու մէջ ահագին բազմութիւն
կար որ հետաքրքրութեամբ կսպասէր տեսնե-
լու համար Սիամի թագաւորը եւ իր հետե-
ւորները որոնք փայլուն համազգեստներ հա-
գած եւ իրենց ոչ-սովորական գէմքերով շատ
ուշադրութիւն գրաւեցին:

Քուլալօնկհօրնի որդին Բռնա Մուհամմէտ
Ալիի հետ նստած էր երկրորդ կառքի մը մէջ
որ Ն. Վեհափառութեան կառքին անմիջապէս
ետեւէն կերթար:

Կիրակի առաւօտ Քուլալօնկհօրն կառքով
պտոյտ մը ըրաւ Մուսրիի կողմը եւ կէսօրէն
վերջ ընդունեց նախարարները եւ հիւպատո-
սական մարմինը որոնք իրենց պաշտօնական
համազգեստները կը կրէին:

Գիշերը Ապտինի պալատին մէջ պաշտո-
նական հացկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ
Ն. Վեհափառութեան:

Երկուշաբթի առաւօտ բռնա Մուհամմէտ
Ալիի հետ Կիզէի թանգարանը պտտելէն վեր-

ջը Բարձր Խափին ընկերակցութեամբ Բուր-
գերը այցելեց եւ կէս օրին ճաշեց խափական
քէօշկինմէջ:

Նոյն իրիկունը յատուկ կառավարմով
Վերին Եգիպտոս ուղեւորեցաւ ուր մնաց մին-
չեւ երէկ, այցելելով Լուքսորի պատմական հնու-
թիւնները եւ Նեղոսի վրայ զբոսանալով պտոյտ-
ներ կատարեց:

Ամեն ուրեք, թէ՛ պաշտօնական մարմին-
ներու եւ թէ՛ ժողովրդեան կողմէ արժանա-
վայել պատիւներ ընծայուեցան:

Երէկ իրիկուն ժամը 7ին Ն. Սիամական
Վեհափառութիւն Գահիրէ վերադարձաւ եւ
կայարանէն ընդունուելով Բարձր Խափին կող-
մէ առաջնորդուեցաւ Ապտինի պալատը:

Սիամի թագաւորը այսօր եւ վաղը Խանը-
Խալիլ այցելելէ եւ դէպի Պառաթ՝ Բարձր Խափ-
վին հետ պտոյտ մը ընելէ ետքը, պիտի եր-
թայ այցելել Սաբարայի գետնափոր հնութիւն-
ները եւ այն տեղի բուրգերը, երկուշաբթի
պիտի մեկնի քաղաքէն դէպի Սիւէզ ուր կըս-
պասէ իր զբոսանալը որով պիտի մեկնի դէպ
ի Պանքը՝ Սիամի մայրաքաղաքը:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Ստորագրեալ պարտ անձին կը համարիմ Փա-
րոսի միջոցաւ իմ հրապարակային շնորհակալիքս
յայտնել Աղեքսանդրիոյ մէջ հաստատուած մեր ազ-
գայիններէն Տօթթօր Ժամկուհեանի որուն խնամքնե-
րուն շնորհիւ այսօր բոլորովին բժշկուած եմ տա-
ժանելի հիւանդութենէ մը սրով երկու տարի շա-
րունակ տառապեցայ Գահիրէի մէջ, հակառակ բժշ-
կական ամեն դարմաններու:

ՏԻՐԱՆ ՀԻՐԻՄԻԻՋԵԱՆ
Դեմակ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Գահիրէ, 1 Նոյմ: 1897

Տ.

Պատիւ ունիմ ծանուցանելու թէ քաղա-
քիս մէջ հաստատուած եմ չապիկներու պատ-
րաստութեան յատուկ գործատեղի մը, Պու-
լաքի ճամբան, եգիպտական հեռագրատան
դէմ:

Պոլսոյ մէջ քսան տարիէ ի վեր մեր տան
համբաւը երաշխաւորութիւն մըն է որ ձեր
հրամանները ամենայն փութկոտութեամբ պի-
տի գործադրուին մեր այս նոր հաստատու-
թեան մէջ՝ ըստ վերջի նորաձեւութեանց եւ
եւրոպական ճաշակով:

Ընդունեցէք, Տ. յարգանացս հաւատարմ
Հ. ՓԱՓԱՋԵԱՆ

Fantoches Holden

Ամեն գիշեր ժամը 9ին ներկայացում՝ Նորընի
Փանթօշներու, Թէաթր Բուսեալի մէջ:

Յայտագրի փոփոխութիւն եւ հրաչափ նորու-
թիւններ:

Վաղը կիրակի՝ ցերեկեայ ներկայացում:

ՄԻ ՄՆԱՔ ԵՐԲԵՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՑՈՑՑԻ

Քանի որ միմիայն 22 դուրսի անհաւատալի
գնոյ մը փոխարէն, նիքէլ, կոթէն լարուղ, ընտիր
ժամացոյցներ կը վաճառուին Սելվանեան մթերա-
նոցի մէջ, ի նախ նախկին Բոլոյ (Ոսկերչաց շուկան)
ձէվաճիր վէքեալէի մէջ:

Սելվանեան մթերանոցի մէջ կը գտնուին նաեւ
ամեն ճաշակի եւ ամեն քուրկի յարմար, ոսկի, ար-
ծաթ, ոսկեպատ եւ նիքէլ ժամացոյցք, շղթաք եւ
գոհարեղէնք ինչպէս նաեւ պատի եւ քոնսոլի բազ-
մազան բանտիւներ:

Ա. Զ. Դ.

Օր. Էթէնի փառաբանումը որ Պոլսոյ կարեւոր թաղերու ազգային վարժարաններու մէջ ձեւագիրութեան դասեր տալով և գնահատուած է իրրեւ լիորձ և կարող ձեւագիրութեան մը, տարիէ մը հետեւ Եգիպտոս հաստատուած է, ձեւագիրութեան դասեր կաւանդէ թէ՛ մասնաւորաց տուններ և թէ՛ փոքր, բնակարաններու մէջ: Երջանակէս կը ստանձնէ կանացի հագուածներու պատրաստութիւն՝ շատ ճաշակաւոր կերպով ու դիւրամատչելի պայմաններով: Գրեմէլ Փարոսի խմբագրատունը: 5-16

Օր. Վերոն ԵԱԳՈՒՊԵԱՆ

Պոլսոյ ծանօթ և առաջնակարգ դերձակուհի. Երեւն Օր. Վերոն Եագուպեան այս անգամ Գահիւրէի մէջ հաստատուած է իր բնակութիւնը, Ապպասիէի մեծ ճամբուն վրայ (Կազոզաի մօտ) Ալի պէի կալուածին մէջ:

Երջանակէսներու, մանրօրներու և կանացի արդուարդի յատուկ ամեն առաջնակներու ճաշակաւոր և անճնանաղատելի պատրաստութիւն:

Զեռագործի յատուկ նիւղ: 1-6

ՏԻՐԱՆ ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

Դերձակ

ՏԱՐԻԱ ՄՈՒՀԱՍՏԵՏ ԱԼԻ, ՄԱՆԱՍՐԱ ՓՈՂՈՑԻ ԴԵՄ

Կը խօստանայ իրեն դիմող յանձնարարները գոհացնել թէ ձեւի կատարելութեամբ և թէ գնոց չափաւորութեամբ: 2-2

ՀԱՄՄԱՄ

ԵՐՈՊԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ

ՀԱՆՄ ՓԱՏԱՅԻ ՀՐԱՊԱՐԱԿ, ՍԲԼԱՆՏԻՏ ՊԱՌԻ ԵՏԻՆ

ԲԱՂՆԻՔ, ԶՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ, ԵԼԵԲՏՐԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

ԲԱՂՆԻՔԸ ԲԱՑ Է

Երկի մարդոց համար առաւօտեան ժամը 7էն 10 և իրիկունը, կէս օրէն սկսեալ մինչեւ 8:

Կանանց համար առաւօտեան ժամը 10էն մինչեւ կէս օր:

Պարտաւ և կիրակի օրերը միմիայն Երկի մարդոց համար:

Կիրակի և տօն օրերը Համմամը կէս օրէն վերջ գոց է:

ՏՊԱՐԱՆ

“ՓԱՐՈՍ, ԼՐԱԳՐԻ

ԿԸ ՏՊԱԳՐՈՒԻՆ

ԱՄԵՆ ԼԵՁՈՒԻ ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԻ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳԼՈՒԻ

ՏՈՄՍԵՐ

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութով կը կատարուին:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցաբարձերու և տնտեսներու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի և տօն օրերէ, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7:

Le Gérant: Dr. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի



ՃԵՐՄԱԿԵՂԵՆ ԵՒԱՅԼՆ ԼՈՒԱԼՈՒ ՀԱՄԱՐ
ԳՈՐԾԱԾ ԵՑԵՑԻՔ

ԼԵՍՍԻՎ ՏԻՒ ԺԵՆԻՆ

Ծախքի և ժամանակի խնայողութիւն. — Մաքրութեան կատարողութիւն. — Մաքրութեան կատարողութիւն. — ձեւագիրութեան և այլոց հասկանալիութիւն:

ԿԱՐԵՒՈՐ. ԼԵՍՍԻՎ ՏԻՒ ԺԵՆԻՆ ԶԻ ՄԱՇԵՅՆԵՐ

Եւրոպայի և Ամերիկայի մէջ 100,000,000 ֆիւտսարեկան սպառում. — Գործածութեան կերպը խիստ դիւրին՝ իւրաքանչիւր բանքի վրայ կը գտնուի:

Միակ ներկայացուցիչ յեգիպտոս

Կ. Վ. ԵԿԱԻԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Դանիք. ՊԱՋԱՐ ՄՈՒՐՈՒՐ 10-24

ԺԱՄԱՅՈՅՑԻ ՊԵՏԻՔ ՈՒՆԻՔ



Դիւնեցէ ՍԵԼՎԱՆ

ՃԵՆԻՆ ԵՒ ՆՈՐԱՀԱՆՈՒՄ
տառ միջերանցի ի
համ խալիլ փողոց
(Ոսկերչաց շուկան)
ձեւագիր վեհալի
մէջ: Սեւեռեան վաճառատունն որ Պոլսոյ հրապարակի վրայ մեծ համբաւ մը կը վայելէր արդէն, իւր ապրանքային ընտրութեամբ ու գնոց անմրցելի ածաւ նուրբեամբ, վերջերս բոլորովին հոս փոխադրուած

ԸԼԼՈՒՎ Եգիպտոսի հասարակութիւնն եւս պիտի կըրնայ մեծապէս օգտիլ այս առիթէն:

Աւերոյց չենք համարիր փոքրիկ գաղափար մը տալ մի բանի տեսակ ժամացոյցներու գնոց վրայ:

Նիքի, մէկ կողմն ապակի, կորէն լարւող 22 դե.ողջ
» » » » » ուրիշ մէկ
» » » » » ճեսակը 40 դե.ողջ

Նիքի, մէկ կողմն ապակի կորէն լարւող ոսկեպատ 50 դե.ողջ

Նիքի, երկու կողմն ապակի, կորէն լարւող 40 » » ոսկեպատ 50 դե.ողջ

Արծաթ » » » » » 70 » » ոսկեպատ 80 դե.ողջ

» » » » » 75 » » ոսկեպատ 85 դե.ողջ

Ոսկի, երկու կողմն » » » » » 120 » » ճարտար մէկ ճեսակ 150 դե.ողջ

Ճիշտ հաշուարար ամեն տեսակ ոսկի ժամացոյցներու թէ կնոջ և թէ արտոյց համար անմրցելի գնեցողութիւն:

Աւերոյց չենք համարիր փոքրիկ գաղափար մը տալ մի բանի տեսակ ժամացոյցներու գնոց վրայ: Նիքի, մէկ կողմն ապակի, կորէն լարւող 22 դե.ողջ
» » » » » ուրիշ մէկ
» » » » » ճեսակը 40 դե.ողջ
» » » » » ոսկեպատ 50 դե.ողջ
» » » » » ոսկեպատ 80 դե.ողջ
» » » » » ոսկեպատ 85 դե.ողջ
» » » » » 120 » » ճարտար մէկ ճեսակ 150 դե.ողջ

Սիմայն 10 դուրուս ողջ

որուն կանոնաւոր բանին երաշխաւորեալ է:

Ուրեմն զիմեցէ ուղղակի Սեւեռեան միջերանցի ի համ խալիլ փողոց (Ոսկերչաց շուկան) ձեւագիր վեհալի մէջ:

Եգիպտոսի ամեն կողմէ եղած յանձնարարութիւնը փութով կը կատարուին: 6-12

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳՆՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԳՐՈՒՑ ԳԻԾ

ԿԱՅԱՐԱՆՔ		Խառն		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Երթրէս		Օմնիպ.		Երթրէս		Օմնիպ.	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1, 2 4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1, 2 4գ.	առտ.	1 2 3 4գ.	առտ.
Գահիւրէ	մեկ.	4 45	—	7 —	—	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —	7 15	11 —	—	—	—	—
Պէնհա	»	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35	—	8 32	12 35	—	—	—	—
Թանթա	ժամ.	11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44	—	9 30	1 44	—	—	—	—
	մեկ.	11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54	—	—	—	—	—	—	—
Տամանհուր	»	3 10	—	7 34	9 41	12 49	7 59	7 7	—	3 51	—	—	—	—	—	—	—
Աղէ բանդըրիա	ժամ.	6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50	—	—	—	—	—	—	—

ԱՂԵՔՍԱՆԳՐՈՒՑԻ ԳՆՀԻՐԷՆ ԳԻԾ

ԿԱՅԱՐԱՆՔ		Խառն		Օմնիպ.		Կէս ուղ.		Օմնիպ.		Երթրէս		Օմնիպ.		Երթրէս		Օմնիպ.	
		1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1 2 4գ.	առտ.	1,2,3,4գ.	առտ.	1 2 4գ.	առտ.	1 2 3 4գ.	առտ.
Աղէ բանդըրիա	մեկ.	—	7 30	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —	—	2 30	4 15	6 15	11 —	—	—
Տամանհուր	»	—	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9	—	4 13	5 15	8 6	1 9	—	—
Թանթա	ժամ.	—	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56	—	5 43	6 10	9 40	2 56	—	—
	մեկ.	6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6	—	6 30	6 14	—	3 6	—	—
Պէնհա	մեկ.	7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25	—	7 33	6 52	—	4 25	—	—
Գահիւրէ	ժամ.	8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50	—	8 45	7 35	—	5 50	—	—

ԳԱՀԻՐԷՆ-ՍԻՒԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻՒԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՏ		ԵՐԵԿՈՑ		ԿԱՅԱՐԱՆՔ		ԱՌԱՌՈՏ		ԵՐԵԿՈՑ	
Գահիւրէ	մեկ.	11 40	7 —	—	—	Սիւէզ (բարափ)	մեկ.	9 50	—	—	—
Պէնհա	ժամ.	12 28	7 48	—	—	» կայարան	»	—	3 30	—	—
	մեկ.	12 33	7 53	—	—		»	—	—	—	—
Զակաղիկ	ժամ.	1 34	8 54	—	—	Իսմաիլիա	»	—	7 5	—	—
	մեկ.	1 44	9 4	—	—		»	—	—	—	—
Իսմաիլիա	մեկ.	3 40	1 —	—	—	Զակաղիկ	ժամ.	3 7	8 53	—	—
	»	»	»	»	»		մեկ.	3 17	9 3	—	—
Սիւէզ կայարան	ժամ.	—	5 —	—	—	Պէնհա	ժամ.	4 13	9 47	—	—
	»	»	»	»	»		մեկ.	4 17	9 4	—	—
Տօք (բարափ)	ժամ.	6 55	—	—	—	Գահիւրէ	ժամ.	5 5	10 35	—	—